ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆ

«07» 11 2025 թ. Թիվ 251-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԻՆՉԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐՈՒՄ ՀԵՐԹԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 22-Ի ԹԻՎ 24-Լ ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 27-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, ինչպես նաև նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում ծառայության առանձնահատուկ բնույթը, մասնավորապես՝ անհետաձգելի վարութային գործողությունների կատարման անհրաժեշտությունը.

Հրամայում եմ.

1. Հաստատել.

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մինչդատական վարույթ իրականացնող հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներում հերթապահություն սահմանելու կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2015 թվականի ապրիլի 22-ի «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մինչդատական վարույթ իրականացնող մարմիններում և ստորաբաժանումներում հերթապահություն սահմանելու մասին» թիվ 24-Լ հրամանը:

3. Սույն հրամանն ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի տեղակալներին, խորհրդականներին, Հայաստանի Հանրապետության

քննչական կոմիտեի հիմնական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների պետերին:

Ա. ՊՈՂՈՍՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
քննչական կոմիտեի նախագահի
07. 11. 2025թ. N 251- Լ հրամանի

ԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԻՆՉԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐՈՒՄ ՀԵՐԹԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) մինչդատական վարույթ իրականացնող հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներում (այսուհետ՝ ստորաբաժանում) հերթապահություն սահմանելու ընթացակարգը:

2. Կոմիտեի ստորաբաժանումներում (բացառությամբ Կոմիտեի կենտրոնական մարմնի ստորաբաժանումների, զինվորական քննչական գլխավոր վարչության վարչությունների, Երևան քաղաքի քննչական վարչության ծանր հանցագործությունների քննության բաժնի) սահմանվում է հերթապահություն՝ ըստ ժամանակացույցի (Ձև N 1):

3. Հերթապահության ժամանակացույցը կազմվում է յուրաքանչյուր ամսվա համար և հաստատվում տվյալ ստորաբաժանման պետի կողմից մինչև ընթացիկ ամսվա 25-ը:

4. Հերթապահության ժամանակացույցը փակցվում է համապատասխան ստորաբաժանման վարչական շենքում՝ Կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (այսուհետ՝ քննիչ) համար մատչելի ու տեսանելի տեղում: Հերթապահության ժամանակացույցի մեկ օրինակն ուղարկվում է Կոմիտեի ներքին անվտանգության վարչություն, իսկ մյուսը՝ համապատասխան հետաքննության մարմնի ստորաբաժանման պետին:

5. Հերթապահությունը սկսվում է աշխատանքային ժամի ավարտից հետո և տևում է մինչև հաջորդ օրվա առավոտյան ժամը 09.00-ն, իսկ ոչ աշխատանքային օրերին սահմանվում է շուրջօրյա հերթապահություն՝ ժամը 09.00-ից սկսած:

6. Հերթապահության ժամանակացույցում, բացի հերթապահ քննիչից, նախատեսվում է օրվա հերթապահին փոխարինող առնվազն մեկ հերթապահ քննիչ:

7. Հերթապահության ժամանակացույցով նախատեսված հերթապահության օրը կարող է փոխվել բացառիկ դեպքերում տվյալ ստորաբաժանման պետի թույլտվությամբ՝ հերթապահ քննիչի գրավոր զեկուցագրի հիման վրա:

8. Հերթապահության ժամանակացույցով նախատեսված հերթապահության օրը փոխելու դեպքում, այդ մասին տվյալ ստորաբաժանման պետի կողմից համապատասխան

նշում է կատարվում հերթապահության ժամանակացույցի «փոփոխություններ» սյունակում:

9. Քննիչը հերթապահության ողջ ընթացքում պարտավոր է գտնվել ծառայության վայրում՝ ամենօրյա համազգեստով, բացառությամբ տվյալ ստորաբաժանման պետի թույլտվությամբ՝ ծառայողական անհրաժեշտությամբ պայմանավորված դեպքերի:

10. Բացառիկ դեպքերում տվյալ ստորաբաժանման պետի թույլտվությամբ հերթապահ քննիչը աշխատանքային ժամի ավարտից հետո, ինչպես նաև ոչ աշխատանքային օրերին կարող է հերթապահությունն անցկացնել տանը:

11. Սույն կարգի 9-րդ և 10-րդ կետերով նախատեսված դեպքերում ծառայության վայրից բացակայել թույլատրվում է հերթապահ քննիչի կողմից հերթապահ ծառայության համար հասանելի լինելու և անհրաժեշտության դեպքում սեղմ ժամանակամիջոցում ծառայության վայր հասնելու հնարավորության պայմանով:

12. Առանձնապես ծանր կամ հասարակական հնչեղություն ունեցող հանցագործությունների դեպքերի վերաբերյալ, ինչպես նաև բոլոր դեպքերում ձերբակալման որոշում կայացնելիս՝ հերթապահ քննիչն անհապաղ հեռախոսակապի կամ այլ միջոցներով իրազեկում է տվյալ ստորաբաժանման պետին:

13. Ստորաբաժանումների պետերը վերահսկում են քննիչների կողմից հերթապահության անցկացման գործընթացը:

14. Հերթապահության անցկացման կարգի խախտումը կարող է առաջացնել կարգապահական պատասխանատվություն:

15. Սույն կարգով չկարգավորված հերթապահության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Ձև N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ

_____

ստորաբաժանման լրիվ անվանումը

ՔՆՆԻՉՆԵՐԻ 20 ԹՎԱԿԱՆԻ _____ԱՄՍՎԱ ՀԵՐԹԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

հ/հ	Հերթապահ քննիչի անուն, ազգանուն, հայրանունը	Հերթապահության օրերը	Բջջային հեռախոսահամարը	Փոփոխություններ
1. 1.1.փոխարինող				
2. 2.2.փոխարինող				
3. 3.3.փոխարինող				

« »_____20 թ.

Պետ՝_____

ստորագրություն, անուն, ազգանուն